

ԱԵԼԻՏԱ ԳՈՒՐԳԵՆԻ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան
գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ

aelita.dolukhanyan@gmail.com

ORCID ID: 0000-0001-9526-9464

DOI: 10.54503/978-5-8080-1557-9-3

ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

*Բանալի բառեր՝ տիպաբանություն, հին գրականություն, միջնադար,
բարոյական չափանիշներ, վերժամանակյա կերպարներ, պաշտոնական գրա-
կանություն, Ոսկեդար, բառարաններ, գրականագիտություն:*

Ներածություն

Թվում է, թե գրականագիտության մեջ տիպաբանության հաս-
կացությունն ավելի նոր ժամանակների երևույթ է, մինչդեռ, ինչպես
վկայում են հեղինակավոր բառարանները, այդ երևույթը դեռ հնագույն
ժամանակների դրսևորում է: Հեղինակավոր “Petit Robert 1” բառարա-
նը տիպաբանության դրսևորումներ տեսնում է Աստվածաշնչի Հին ու
Նոր Կտակարաններում: Արվեստում և կրոնում «Համաձայնեցումը Հին
և Նոր Կտակարանների, որի հիմքում ընկած է միջնադարի քրիստո-
նեական կերպարային պաշտամունքը»¹: Այս միտքը կա և Հրաչյա
Աճառյանի «Արմատական բառարանում»², որը տիպական կերպարներ
է տեսնում Ագաթանգեղոսի, Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու
գործերում:

Ստեփանոս Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարա-
նում» կարդում ենք. «Գեղարվեստական գրականության մեջ՝ անձ, որի
մեջ ցայտուն կերպով արտահայտված են որոշ մտավոր և բարոյական
գծեր, որոնք ընդհանուր են մի խումբ մարդկանց մեջ և որոնցով նրանք

¹ “Petit Robert 1”, Paris, Nouvelle édition, 1979, 2043:

² Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. IV, Եր., ԵՊՀ հրատ., 1979, էջ
408:

զանազանվում են ուրիշ մարդկանցից: Ռաֆֆին Քավոր Պետրոսի մեջ դուրս է բերել խաչագողի տիպը: Հայ վաճառականի տիպերը գեղեցիկ հաջողվել են Սունդուկյանի պիեսներում: Եղիշեի մեջ Վարդանն ու Վասակը ոչ միայն պատմական անձնավորություններ են, այլև գեղարվեստական տիպեր. մեկը առաքինության, մյուսը մոլության»³:

Ակնհայտ է, որ գրականագիտությունը տիպաբանության վրա առավել սևեռուն ու քննական մոտեցում ցուցաբերել է՝ սկսած XIX դարից: Այդ վկայում են հմուտ գրականագետների գրքերը ոչ միայն հայ, այլև արևմտյան իրականության մեջ: Ֆրանսիացի նշանավոր գրականագետ Roger Fayolle-ը իր «La critique» գրքում նկատում է. «Մեր միջնադարյան գրականությունը չի ուղեկցվել մի քննադատությամբ, որն առաջնորդեր ու դասակարգեր այն»⁴: Նա հիշեցնում է XIX դարի ամենանշանավոր գրաքննադատի՝ Վիսարիոն Բելինսկու ասածը, ըստ որի հնարավոր չէ խոսել Արևմտյան Եվրոպայի (բացառությամբ Իտալիայի) գրաքննադատության մասին մինչև տպագրության գյուտը⁵:

Այդ է պատճառը, որ XIII դարի ֆրանսիական հանրահայտ «Վարդի սիրավեպը» («Le Roman de la Rose») մեկնության է ենթարկվել XIX և XX դարերում: Մինչդեռ առանձնակի արժեք կունենային XIII և XIV դարերի մեկնությունները⁶: Գրականության՝ մարդկային կյանքի վրա ունեցած բարերար ազդեցության մասին խոսել է հույն հանճարեղ փիլիսոփա Արիստոտելն իր մի շարք աշխատություններում: Նա հատկապես հիացած էր Հոմերոսի «Իլիականով» ու «Ոդիսականով», որոնցից բերված բազում մեջբերումներ կան նրա տարբեր աշխատություններում: Արիստոտելին հետաքրքրել է խիզախ մարդու խնդիրը. չէ՞ որ խիզախները կատարում են գործեր հանուն գեղեցիկի⁷: Իսկ մեծ փիլիսոփայի համար խիզախության օրինակը տալիս է երկրի թագավորը. այդ մասին վկայում է Հոմերոսը իր երկու գործերում⁸:

³ **Մալխասյանց Ստ.**, Հայերեն բացատրական բառարան, հ. IV, Եր., ԵՊՀ հրատ., 2010, էջ 413:

⁴ **Fayolle R.**, La critique, Pub. Armand Colin, Paris, 1978, p. 12.

⁵ Նույն տեղում, էջ 13:

⁶ «**Le Roman de la Rose**», Imp.Garnier-Flammarion, Paris, 1974:

⁷ **Аристотель**, Сочинения в четырех томах, т. 4, М., изд.-во Академии наук СССР, 1984, с. 113.

⁸ Նույն տեղում, էջ 103:

Հայկական «Գրականագիտական բառարանում» տիպականը բացատրվում է Սասունցի Դավթի, Իլյա Մուրումեցի, Ֆաուստի, Դոն-ժուանի օրինակներով: Կերպարներ են հիշատակվում Վերաձննդի դարաշրջանից՝ Համլետ, Օթելլո, Դոն-Կիխոտ և ուրիշներ: Սրանց հետևում են տիպական կերպարներ եվրոպական, ռուսական ու հայ նոր գրականություններից: Ճշգրտորեն նկատված է. «Ամեն մի գեղարվեստական տիպ սերտորեն կապված է իր ժամանակի հետ, նրա ծնունդն է»⁹:

Ալեքսանդր Պուշկինը, հիացած Շեքսպիրի հանճարով, նկատում է, որ եթե կլասիցիստ Մոլիերի մոտ ժլատը միայն ժլատ է, և ուրիշ ոչինչ. «Շեքսպիրի մոտ Շեյլոկը ժլատ է, ուշիմ, վրիժառու, որդեսեր, սրամիտ»¹⁰:

Ինչպես կտեսնենք, առավել միագիծ են հայ միջնադարի տիպաբանական այն դրսևորումները, որոնք առանձնապես չեն ենթարկվել հատուկ մեկնողական ուսումնասիրության՝ ելնելով ոչ թե արդիական պատկերացումներից, այլ հենց քրիստոնեական միջնադարից:

Հոդվածի նպատակն է՝ հայ միջնադարի պաշտոնական գրականության օրինակների հիման վրա ներկայացնել տիպաբանության երևույթը մեսրոպատառ միջնադարյան գրականության մեջ:

Հոդվածի շարադրանքը և փաստերի համադրումը կատարվել է հայ միջնադարյան մատենագրության գանձերի դասական-մեկնողական մեթոդով: Այն ընդհանուր է նաև եվրոպական ու ռուսական քրիստոնեական պաշտոնական գրականության համար:

Տիպաբանական դեմքեր հայ միջնադարյան գրականության մեջ

Հայ միջնադարի վաղ շրջանի քրիստոնեական գրականությունը ձևավորվեց Մեսրոպ Մաշտոցի հանճարեղ այբուբենի երևան գալուց հետո: Եվ դրա առաջին գրական դրսևորումներից մեկն էր Կորյուն վարդապետի «Վարք Մաշտոցի» աշխատությունը՝ նվիրված իր մեծ ուսուցչի կյանքին ու գործին: «Վարք Մաշտոցի» երկը թարգմանված է եվրոպական հիմնական լեզուներով, նաև ռուսերենով: Այն ներկայացնում է Մաշտոցի կերպարը վարքագրությանը հատուկ գծերով: Պատա-

⁹ Զրբաշյան Էդ., Մախչանյան Հ., Գրականագիտական բառարան, Եր., «Լույս» հրատ., 1972, էջ 289:

¹⁰ Պուշկին Ա., Երկեր հինգ հատորով, հ. 5, Եր., Հայպետհրատ, 1960, էջ 286:

հական չէ, որ այդ երկի երկրորդ առաջաբանում Կորյունն օրինակներ է բերում Հին Կտակարանից, Պողոս առաքյալի թղթերից: Նա հատկապես հիշում է Սամսոնին ու Դավթին, որոնք իրենց քաջությամբ պաշտպանել են հրեա ժողովրդին: Հայ միջնադարյան գրականության մեջ այդ երկու քաջերը շարունակ հիշատակվում են թե՛ արձակում և թե՛ քնարերգության մեջ՝ որպես տիպական քաջեր: Հովհաննես Թլկուրանցին այդ հեղինակներից մեկն է, որն իր «Տաղ քաջի Լիպարիտին» քերթվածում նպատակ ունի հայ ազգի հետագա բոլոր սերունդներին տեղյակ պահել, յուրօրինակ ձևով ի պահ տալ Կիլիկյան հայկական թագավորության վերջին սպարապետներից մեկի՝ Լիպարիտի անձնագրության պատմությունը և նրան համեմատում է ոչ միայն հայ եկեղեցու սրբերից Սարգսի, պատմական անձեր՝ Կիլիկիայի թագավոր Թորոսի, Մամիկոնյան տան սպարապետներ Մուշեղի ու Վարդանի, այլև Աստվածաշնչի Սամսոնի հետ.

Անձամբըդ քաջ Սամփսոն էիր,
Յորժամ ճօշանդ հագնեիր՝
Թուրքն ի յահէդ դառնար մոխիր,
Ո՛վ մեծ հըզօր քաջ Լիպարիտ¹¹:

Տիպաբանական առումով Մեսրոպ Մաշտոցը համապատասխանում է սուրբ կոչվելու բոլոր կանոններին: Հետևելով ավետարանական կանոնին՝ նա նվիրվում է Աստծու ծառայությանը՝ այլևս չլինելով բարձրաստիճան պետական պաշտոնյա: Հնագետ ու հմուտ պատմաբան Մորուս Հասրաթյանը համոզված պնդում է, թե Խոսրովի գահակալումից հետո հին գահակալի հետ արքունիքից հեռացվել է նաև զինվորական ծառայության մեջ գտնված 30-ամյա եռանդուն ու կրթված երիտասարդը. որպես հայրենասեր ու մեծ մտածող՝ նա խորամուկ է լինում իր ազգափրկիչ գործին՝ արդեն որպես հոգևորական¹²:

Երբ Կորյունը հայոց այբուբենը համարում է Աստծուց շնորհված, դրա մեջ չպետք է տեսնել քրիստոնեական կրոնի չափազանցություն: XIX դարում շատ նշանավոր օտարազգի գիտնականներ Մաշտոցի այբուբենը համարում են հանճարեղ, իսկ բոլոր հանճարները կապ ունեն

¹¹ **Հովհաննես Թլկուրանցի**, Տաղեր, աշխատասիրությամբ՝ Էմ. Պիվազյանի, Եր., ՀՍՍՌ ՊԱ հրատ., 1960, էջ 197:

¹² **Հասրաթյան Մ.**, Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, Եր., ՀՍՍՌ ՊԱ հրատ., 1985, էջ 34–35:

նախախնամության հետ: Կորյունը ներկայացնում է Մաշտոցի եռանդուն գործունեությունը ողջ Մեծ Հայքում դպրոցներ բացելու սուրբ գործում և հարևան երկու քրիստոնյա ժողովուրդներին նույնպես այբուբենն պարզելու, որպեսզի քրիստոնեական ճակատը առավել ամրակուռ լինի: Մաշտոցը եղել է մեծ հեռատես ու քաղաքագետ: Միջնադարին հատուկ տիպաբանական ձևով է պատկերված նրա մահն ու թաղումը: Մաշտոցը վախճանվում է 440 թվականի փետրվարի 17-ին՝ շրջապատված իր սիրասուն աշակերտներով: Մեծ Հայքի հազարապետ Վահան Ամատունին և Վարդան Մամիկոնյանի եղբայրը՝ Հմայակը, նրա մարմինը տեղափոխել են տալիս Օշական: Քրիստոնեական սրբախոսական գրականության մեջ ներկայացվում է Աստծու երանելի զավակների վրա մահվան պահին լույսի տեսքով տեսիլ երևալը: Նույնը կատարվում է Մաշտոցի մահվան ժամանակ, ու այդ լույսը նրան ուղեկցում է մինչև Օշական¹³:

Մաշտոցին Կորյունը ներկայացնում է որպես պետական մտածողություն ունեցող հեռատես ու ազգապահպան գործիչ: Այդ հանգամանքը շեշտում է նաև Մանուկ Աբեղյանը՝ հայ միջնադարյան գրականության չգերազանցված գիտակը. «Մաշտոցը հանդես է գալիս իբրև անսպառ եռանդի տեր, շնորհալի և ազդեցիկ տղամարդ, որ մտածում և հոգում է ամբողջ հայության, այլև հարևան ժողովուրդների համար, որ շարունակ շրջում է իր տեսչական այցելություններով հաստատուն հիմքերի դնում իր սկսած գործը»¹⁴:

Արդեն ասվել է, որ Ոսկեդարի հայ պատմագրությունը բացի պատմական, այն էլ հաճախ միջազգային արժեք ունենալուց, նաև փառահեղորեն նշանավորում է հայ քրիստոնեական գրականությունը՝ ազատորեն օգտվելով հեթանոսական շրջանից մնացած բանահյուսական գրականությունից: Դրա առաջին կիրառողը դառնում է V դարի պատմիչ Ագաթանգեղոսը: Նրա «Հայոց պատմության» մեջ առկա է Տրդատ Մեծի տիպաբանական կերպարը և Գրիգոր Լուսավորչի սրբախոսական տիպաբանությունը:

¹³ Կորյուն, Վարք Մաշտոցի, Եր., ԵՊՀ հրատ., 2005, էջ 95–97:

¹⁴ Աբեղյան Մ., Երկեր, հ. Գ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1968, էջ 117:

Տրդատ Մեծի գահակալության շրջանը միջազգայնորեն ճանաչված է որպես նորընծա քրիստոնյա դարձած Մեծ Հայքի ծաղկուն շրջան¹⁵:

Հռոմի կայսր Ներոնը խորին հարգանքով է խոսում Տրդատի մասին. «Եվ դու լավ արեցիր անձամբ գալով այստեղ, որպեսզի քո ներկայությամբ իմ ներկայությունը վայելես, և այն ամենը, ինչ ոչ քո հայրը քեզ ժառանգություն թողեց, ոչ ևս քո եղբայրները քեզ տալուց հետո պահպանեցին, ես բոլորը քեզ պարգևում եմ և դարձնում Հայաստանի թագավոր, որպեսզի թե՛ դու և թե՛ նրանք հասկանան, թե ես կարող եմ թագավորությունները և՛ վերցնել, և՛ պարգևել»¹⁶:

Ազաթանգեղոսը չի էլ թաքցնում՝ ինքն օգտվում է ժողովրդական ավանդություններից ու Տրդատ Մեծին ներկայացնում է որպես գերմարդ: Նա կարող էր թոչել թշնամու քաղաքի պարսպից ներս ու խոտի մեծ խրճեր նետել իրենց զորքի ձիերի համար,¹⁷ կարող էր մեն-մենակ փոխել գետերի հունը և ցամաքեցնել ծովերի հորձանուտները.

Իբրև զսէգն Տրդատ, որ սիգալովն

Աւերեաց զթումբս գետոց և ցամաքեցոյց,

Իսկ ի սիգալն իւրում զյորձանս ծովուց¹⁸:

Տիպաբանական է նաև Գրիգոր Լուսավորչի կերպարը, որի վարքում կան բազմաթիվ վկայաբանական տարրեր: Նրա կրած ֆիզիկական պատիժներից մեկն արդեն բավարար էր, որպեսզի վերջինս հրաժեշտ տար իրական կյանքին, սակայն նա ոչ միայն չի մեռնում, այլև երկար տարիներ կենդանի է մնում Խոր Վիրապում:

Տիպաբանական մի ամբողջ պատկերասրահ է պատկերված Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» մեջ: Պատահական չէ, որ հենց Բուզանդի երկն առ այսօր գրողներին ներշնչում է ստեղծելու պատմական բնույթի ամենատարբեր ժանրերի գործեր:

Բուզանդի մոտ տիպականացված են հատկապես Մամիկոնյան սպարապետները և Ներսես Մեծն ու Հռիան Եպիսկոպոսը:

¹⁵ Брокгауз Ф., Ефрон Н., Иллюстрированный энциклопедический словарь, М., изд.-во «ЭКСМО», 2012, 691 с.

¹⁶ Annie et Jean-Pierre Mahé, Histoire de l'Arménie, Paris, Perrin, 2012, p. 69.

¹⁷ Ազաթանգեղոս, Հայոց պատմություն, Աշխարհարար թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, Եր., ԵՊՀ հրատ., 1983, էջ 37:

¹⁸ Նույն տեղում, էջ 78:

Արշակ Երկրորդի ու Պապ թագավորի հարցում պատմիչն ունի մեղանշումներ, ու դրանք հստակ երևում են, երբ Մեծ Հայքի երկու թագավորներին՝ Արշակ Երկրորդին ու Պապին, դիտարկում ենք ըստ IV դարի հույն հեղինակ Ամմիանոս Մարկելինոսի հաղորդած փաստերի: Արշակ Երկրորդին իր կենտրոնաձիգ և նպատակաուղղված հայրենասիրական քաղաքականության պատճառով ցմահ բանտարկում են պարսիկները, իսկ Պապ թագավորին սպանում են բյուզանդացիները:

Ըստ Ամմիանոսի, Շապուհը շարունակ ձգտում էր գրավել Հայաստանը, սակայն Արշակը զինվորական ուժով դիմադրում էր, հետո նա նախարարներին ու ազնվականներին թեքում էր իր կողմը, ու երբ տեսնում էր, թե ոչինչ չի ստացվում, «գործի դնելով հրապուրանք և երդմնազանցություն, նա կարողացավ ձեռք գցել Արշակին», վերջինիս, ցմահ բանտարկելուց հետո, մահապատժի է ենթարկում¹⁹:

Փափստոս Բուզանդը ամեն կերպ սևացնում է Պապ թագավորի ազգագույն գործունեությունը: Սակայն, ըստ Ամմիանոսի, Պապը հայրենասեր էր և ձգտում էր զերծ մնալ թե՛ Բյուզանդիայի և թե՛ Պարսկաստանի կախվածությունից: Բյուզանդացիները փորձում են Պապին սպանել՝ կանչելով Կիլիկիայի Տարսոն քաղաքը, սակայն խիզախ արքան իր թիկնազորով փախչում է Հայաստան: Ի վերջո բյուզանդացիները նրան սպանում են ճաշկերույթի ժամանակ. «Թագավորը նրան տեսավ այն ժամանակ, երբ փոքր-ինչ թեքվում էր բազկաթոռում: Վեր կացավ և հանեց դաշույնը, որպեսզի, որքան կարող է, պաշտպանի իր կյանքը, սակայն նա վայր ընկավ կրծքից խոցված՝ որպես ամոթալի մի զոհ: Նա հոշոտվեց կրկին հասցված հարվածներից: Ահա այսպիսի նենգությամբ խարդախվեց դյուրահավատությունը»²⁰: Բուզանդի «Հայոց պատմության» մեջ տիպականացված են Մամիկոնյան սպարապետները՝ Վասակը, Մուշեղը և Մանվելը: Նրանց հայրենասիրական էությունը այնքան տպավորիչ է ներկայացվում, որ նոր շրջանի հայ գրողները՝ Րաֆֆին, Ստեփան Զորյանը, Պերճ Զեյթունցյանը որոշ դրվագներ փոխառել են պատմիչից և զետեղել իրենց գործերում: Անգամ Մուրացանը, որը պատկերել է X դարի դեպքեր ու գրել արաբական

¹⁹ Հայ ժողովրդի պատմության քրեատոմատիա, Եր., ԵՊՀ հրատ., 1981, էջ 485, 486:

²⁰ Նույն տեղում, էջ 507:

արշավանքների մասին, Գևորգ Մարգարետունու մահվան տեսարանում ազդվել է Մանվել Մամիկոնյանի կերպարի նույնանման դրվագից:

Տիպաբանական գլուխգործոց է Հոհան Եպիսկոպոսի կերպարը: Բուզանդը հայ հոգևորականի կատարելատիպը տեսնում է Ներսես Մեծի մեջ: Վերջինս կարծես Աստծու գործնական հրեշտակն էր Մեծ Հայքում, և դա երևում է հենց նրա կաթողիկոս ձեռնադրվելու տեսարանում, երբ Աստծու հրեշտակը սպիտակ աղավնու կերպարանքով նստում է նրա վրա. «Իսկ իբրև Եհաս ժամ՝ յորժամ կամեցան զՆերսէս ձեռնադրել, վերացաւ աղանին ի սրբոյն Բարսեղէ և նստաւ ի վերայ գլխոյն Ներսէսի»²¹:

Փափստոսը տիպական ձևով ներկայացրել է Հոհան Եպիսկոպոսին, որին չէր կարելի Եպիսկոպոս կոչել, որովհետև նա ավագակից էլ ավագակ էր: Որպեսզի այդ խաբեբայի կերպարն ամբողջական լինի, պատմիչը ներկայացնում է արդի առումով երեք մանրապատում նովելներ: Առաջինում Հոհանը մի երիտասարդ ավագակից խլում է նրա ընտիր ձին ու բռնությամբ վերջինիս ձեռնադրում է երեց, այն դեպքում, երբ վերջինս կնքված էլ չէր: Երկրորդ նովելում այգեգործի այգին օրհնելու փոխարեն անիծում է և ասում. «Փուշ և տատասկ բուսցի»²²: Երրորդ նովելը բարձրաստիճան հոգևորական Հոհանին ներկայացնում է որպես խեղկատակ:

Այս տիպաբանական կերպարով Բուզանդն ահագանգում է թե՛ իր ժամանակի և թե՛ ապագա հոգևորականներին՝ այդպիսին չլինեն. «Այդպիսին էր այրս Յոհանս կապեալ յըռժգութեան և յագահութեան զամենայն աւուրս կենաց իւրոց. զայսպիսի գործս գործէր վասն ագահութեան, որ չէր արժան»²³:

Եթե տիպաբանացված կերպարները գրողները կերտում են հասարակական խնդիրներ լուծելու համար, ապա պատմահայր ու քերթողահայր Խորենացին այդ հարցում առաջնեկներից է: Դերենիկ Դեմիրճյանը 1953-ին՝ արդեն խիստ հասուն տարիքում է գրել. «Տիպ ու խարակտեր» բնութագրականը: Տեղին է նրա գրվածքից նույնությամբ մեջբերել մի հատված. «Ի՞նչ բան է տիպաբանություն: Դա անհատի

²¹ **Փափստոս Բուզանդ**, Հայոց պատմություն, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Եր., ԵՊՀ հրատ., 1987, էջ 114:

²² Նույն տեղում, էջ 408:

²³ Նույն տեղում, էջ 410:

մեջ արտացոլված, կենտրոնացած, հավաքված այն հատկություններն են, որ բնորոշ են նրա միջավայրի, հասարակության, դասակարգի, էպոխայի համար: Այդպիսի հատկությունների կրողը կոչվում է տիպ»²⁴:

Մովսես Խորենացին իր ժամանակի և հետագա բոլոր դարերի համար կերտել է հայոց թագավորների երեք կերպարներ, որոնք մեր ազգի պատմության հոլովույթում մնացել են անմոռաց: Այդ կերպարներն են Հայկը՝ առաջին Հայոց պետականություն ստեղծողը, Արամը՝ Հայաստանի սահմաններն ընդարձակողը, և Տիգրանը, որի ժամանակ Հայաստանը դարձավ կայսրություն:

Դանթե Ալիգերին՝ իտալական Վերածնության սկզբնավորողը, համոզված է, թե «վսեմ մարդկանց հարկավոր է ներկայացնել վսեմ ձևով»²⁵:

Այդպիսի վսեմ ձևով էլ տիպականացված են հայ ազգի երեք թագավորները՝ պատմահոր սիրելիները: Նշանավոր խորենացիագետ Գագիկ Սարգսյանը, որ պատմահոր գլուխգործոցը նորովի թարգմանեց ուսերենով ու նրան կցեց մեծարժեք առաջաբան, հայ պատմահորը ծանրակշիռ փաստերով հաստատում է որպես Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի աշակերտ, որը ճշգրտորեն ներկայացնում է հայ պետականության սկզբնավորումը: Պատմահայրը երբեք Հայաստանի պատմությունը չի ներկայացնում մեկուսացված, այլ հնադարի քաղաքակիրթ աշխարհի քաղաքական խոշոր իրադարձությունների տեսադաշտով²⁶:

Հայ պատմիչների միջազգային դերի մասին խոսում է նաև միջնադարյան ու համաշխարհային պատմության ու գրականության քաջ գիտակ Ստեփանոս Նազարյանցը. «Հայաստանի մատենագիրներից հատկապես կարևոր են պատմիչները, որոնք ծանոթացնում են մեզ մեր հայրենիքի գործերին, հաճախ հարստացնելով մեր տեղեկությունների պակասը ասիական ժողովուրդների ճակատագրի վերաբերյալ»²⁷:

²⁴ **Գրականագիտության ներածություն**, խմբագրությամբ՝ Էդ. Ջրբաշյանի, Եր., ԵՊՀ հրատ., 1984, էջ 136:

²⁵ **Хрестоматия по теории литературы**, М., изд.-во “Просвещение”, 1982, с. 92.

²⁶ **Мовсес Хоренаци**, История Армении, перевод с древнеармянского языка, введение и примечания Гагика Саркисяна, изд.-во “Айастан”, Ер., 1990, с. XL.

²⁷ **Նազարյան Ստ.**, Երկերի ժողովածու, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1996, էջ 10:

Ամբողջացնելով Հայկյան Արամի կերպարը՝ այդ տիպական արքայի վարքագծով պատմահայրը կամենում է պատգամել հայ ազգի հետագա բոլոր առաջնորդներին: Իր հզորությամբ նա դառնում է հայ ազգի անվանադիրը. «Սա այդ աշխատասեր և հայրենասեր եղեալ, որպէս ցուցանէ նոյն պատմագիր, լաւ համարէր զմեռանելն ի վերայ հայրենեացն, քան թէ տեսանել զորդիս օտարածնեաց կոխելով զսահմանս հայրենեացն և հարազատից արեան նորա տիրել արանց օտարաց»²⁸:

Իհարկե, ամենից տիպաբանական է Տիգրան Երվանդյանի կերպարը, որի մեջ առկա են Տիգրան Մեծի գործունեության ու հզորության փաստեր: Որպես կանոն, միջնադարյան իդեալական, ցանկալի բոլոր տիպերը գեղեցիկ են և՛ իրենց արտաքինով, և՛ իրենց գործերով:

Ներքին ու արտաքին ներդաշնակությունը նույն է պատմահոր երեք առաջնորդների մոտ:

Եզակի բյուզանդագետ և հայագետ Ն.Ադոնցի համար Տիգրան Մեծը շատ սիրելի պետական գործիչ էր: Նա ցավով նշում է, որ Տիգրան Մեծի քաղաքական հաջողությունների մասին նրա ապրած ժամանակի հայկական աղբյուրները կորած են, իսկ հունահռոմեականները շատ բան ներկայացնում են աղավաղված՝ հանուն Հռոմի փառքի: Տիգրանի անունը Հռոմեական կայսրությանը հաղթելու պատճառով մտել է աշխարհի նշանավոր հանրագիտարանների մեջ²⁹: Տիգրանն իրեն ենթակա թագավորներին հաճոյանալու համար, ըստ Պլուտարքոսի, ասել է հետևյալ խոսքերը. «Եթե հռոմեացիները եկել են որպես դեսպանություն, շատ են, իսկ որպես զորք՝ քիչ են»³⁰:

Ֆրանսիական ակադեմիայի անդամ Ռլնե Գրուսեն Տիգրան Մեծի մասին ասել է. «Տիգրանը իր ժողովրդի ապրելու իրավունքն ապահովեց հավիտենականության համար»³¹:

«Հայոց պատմության» առաջին գրքի ԻԴ գլխում Խորենացին ներկայացնում է իր սիրելի Տիգրանի կերպարը՝ հիշեցնելով, թե հետագա դարերում հայերի համար ցանկալի էր թե՛ Տիգրանը, թե՛ իր ժամա-

²⁸ **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի, Եր., ԵՊՀ հրատ., 1981, էջ 52:

²⁹ Nouveau petit Larousse illustré, Paris, Imp. Libraire Larousse, 1932, p. 1711.

³⁰ **Ադոնց Ն.**, Երկեր հինգ հատորով, հ. Դ, Եր., ԵՊՀ հրատ., 2009, էջ 480:

³¹ Նույն տեղում, էջ 29:

նակը, «որի մասին մեր հները, որոնք փանդիռներով երգում էին, ասում էին, թե մարմնի ցանկությունների մեջ էլ չափավոր է եղել»³²:

Հույն պատմիչը, որը շատ հարցերում աղավաղել է Տիգրան Մեծի պատմությունը հոգուտ Հռոմի, արել է նաև այսպիսի խոստովանություն. «Տիգրանի հասցեին ցանկացած բնույթի շատախոսությունից և զրպարտություններից հետո, պատմիչը նույնքան անսպասելի, որքան և իրական խոստովանություն է անում, թե Լուկուլոսը բազմաթիվ մարտերից հետո ի դեմս Տիգրանի հանդիպել է անպարտելի ու վսեմ քաջությամբ օժտված թշնամու»³³:

Խորենացու համար սիրելի հեղինակ է եղել Հոմերոսը և վերջինիս «Իլիականը», իսկ Աքիլլեսն իր նախընտրած քաջն էր՝ աստվածների սիրելին.

Հույս ունեմ արդ, ո՛վ Աքիլլես, դու սիրելիդ Արամազդի,

Որ մեծ պարծանք պիտի տոնենք դեպ աքայանց նավատորմիդ³⁴:

Տիպաբանությունն առկա է նաև Եղիշեի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» աշխատության մեջ պատկերված երկու պատմական կերպարների նկարագրում և վարքագծում՝ Վարդան Մամիկոնյանի ու Վասակ Սյունեցու:

Ավելին, Եղիշեն չի էլ թաքցնում, թե ամենասև գծերով պատկերելով դավաճան մարզպան Վասակ Սյունեցուն՝ դրանով կամենում է կանխել հետագայում հայ ազգի կյանքում տեղի ունենալիք դավաճանությունները. «Գրեցաւ յիշատակարանս այս վասն նորա, առ ի կշտամբումն յանդիմանութեան մեղաց նորա. զի ամենայն՝ որ զայս լուեալ գիտասցե, նզովս ի հետ արկցէ, և մի՛ լիցի ցանկացող գործոց նորա»³⁵:

Սակայն նույն Եղիշեն ունի նաև մեկ ուրիշ կարևոր վկայություն. Վասակ Սյունեցին կամեցել է վերականգնել Հայոց պետականությունը ու դառնալ թագավոր³⁶:

Այդ նույն փաստը կա նաև Ղազար Փարպեցու մոտ, որը ներկայացնում է, թե պարսիկների դեմ ապստամբելու շահագրգիռ կողմը եղել է հենց Վասակը, որը ռազմական օգնություն է խնդրել Աղվանքից և

³² **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Եր., ԵՊՀ հրատ., 1981, էջ 87:

³³ **Ադոնց Ն.**, Երկեր հինգ հատորով, հ. Դ, էջ 509:

³⁴ **Հոմերոս**, Իլիական, Գրաբարից թարգմանեց՝ Մկրտիչ Խերանյան, Եր., ԵՊՀ հրատ., 1987, էջ 409:

³⁵ **Եղիշե**, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Եր., ԵՊՀ հրատ., 1989, էջ 282:

³⁶ Նույն տեղում, էջ 283:

Վրաստանից, անգամ հոներից: Այդ նամակները, կնքված մարզպան Վասակի մատանիով, մնացել են անպատասխան: Այդ փաստերը Տիգրանի ատյանի ժամանակ դրվում է Վասակի առաջ, ու նա դատապարտվում է ցմահ բանտարկության ու մեռնում է բանտում³⁷:

Եղիշեի պատմությունն ավարտվում է Հայոց աշխարհի փափկասուն տիկնանց փառաբանող շքեղ ներբողով: Սա նույնպես տիպաբանական նկարագիր է՝ պատմականորեն ճշգրիտ, արվեստի առումով նպատակային: Պահպանել այդ ազնվական կանանց՝ իրենց ամուսինների նկատմամբ ունեցած նվիրման գեղեցիկ պատմությունը և հայ կանանց դաստիարակել հայրենասիրության ու ընտանեսիրության ոգով:

Հայ միջնադարյան պաշտոնական գրականության յուրօրինակ տիպաբանությունը շարունակվում է մինչև XVIII դարը՝ արձակում և քնարերգություն մեջ երևան բերելով ուշագրավ դրսևորումներ:

Եզրակացություններ

Տիպաբանությունը՝ որպես գրական երևույթ, գալիս է վաղնջական ժամանակներից: Այն առկա է նաև ժողովրդական բանահյուսության և թե Մաշտոցյան այբուբենի ստեղծումից հետո ստեղծված հայ քրիստոնեական միջնադարյան գրականության մեջ:

Տիպաբանությունն ունեցել է որոշակի նպատակ. օրինակ դարձնել հերոսական վարքագիծ ու բարոյական ցանկալի հատկանիշներ ունեցող անհատներին ու մերժել բոլոր նրանց, ովքեր շեղվում են Աստվածաշնչի տասը պատվիրաններից:

Տիպաբանության դրսևորումներ կան Աստվածաշնչի Հին ու Նոր Կտակարաններում, որոնց դրսևորումները բնականաբար ազդել են պաշտոնական գրականության վրա:

Հայ միջնադարի գրականության մեջ կերտված տիպաբանական կերպարներն իրենց ներգործուն ուժը շարունակում են նոր օրերում: Նրանք հիմք են դարձել նոր շրջանի գրականության ու արվեստի բնագավառում մեծարժեք գործերի ստեղծման համար:

Միջնադարի բարոյական արժեքները շարունակությունն են մարդկության առավել հին ժամանակների քաղաքակրթական երազանքների ու ձգտումների:

³⁷ **Ղազար Փարպեցի**, Հայոց պատմություն, Թուրք Վահան Մամիկոնյանին, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Բագրատ Ուլուբաբյանի, Եր., ԵՊՀ հրատ., 1982, էջ 197:

АЭЛИТА ДОЛУХАНИЯН

*Член-корреспондент НАН РА, доктор филологических наук,
профессор, заведующая кафедрой древней и средневековой
армянской литературы и методики ее преподавания
АГПУ имени Х. Абовяна*

ТИПОЛОГИЯ В СРЕДНЕВЕКОВОЙ АРМЯНСКОЙ ОФИЦИАЛЬНОЙ ЛИТЕРАТУРЕ

Резюме

Типология как литературное явление восходит к древнему периоду. Она известна также в фольклоре и в средневековой армянской христианской литературе, созданной на основе алфавита Маштоца.

Типология имела определенную цель: сделать образцом личности, наделённые желаемыми моральными качествами и героическими поведенческими чертами, и отвергать всех тех, кто не придерживается десяти библейских заповедей.

Типология нашла отражение в Ветхом и Новом завете, что, естественно, оказало влияние на официальную литературу. Типические образы, созданные в армянской средневековой литературе, имеют силу воздействия и в наши дни. Они послужили основой в создании ценных работ в сфере литературы и искусства нового периода.

Нравственные ценности средневековья являются продолжением цивилизационных чаяний и стремлений человечества, восходящих к более древним временам.

Ключевые слова: *типология, древняя литература, средневековье, нравственные критерии, вневременные образы, официальная литература, Золотой век, словари, литературоведение.*

AELITA DOLUKHANYAN

Corresponding member of the NAS RA, doctor of philological sciences, professor, head of the chair of ancient and medieval armenian literature and its teaching methodology at the ASPU named after Kh. Abovyan

TPOLOGY IN MEDIEVAL ARMENIAN OFFICIAL LITERATURE

Abstract

Typology as a literary phenomenon date back to the ancient period. It is also known in folklore and in medieval Armenian Christian literature, created on the basis of Mashtots' alphabet.

Typology had a specific goal: to make a model of individuals endowed with desirable moral qualities and heroic behavioral traits and to reject all those who do not adhere to the Ten Biblical Commandments.

Typology was reflected in the Old and New Testaments, which naturally influenced the official literature. Typical images created in Armenian medieval literature have the power to influence today. They served as the basis for the creation of valuable works in the field of literature and art of the new period.

The moral values of the Middle Ages are a continuation of the civilizational hopes and aspirations of mankind, dating back to more ancient times.

Keywords: *typology, ancient literature, Middle Ages, moral criteria, timeless images, official literature, Golden Aged, dictionaries, literari criticism.*